

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀՈԶԱԿԱԳԻՐ 6 Նոյեմբեր, 2019

Քանդաս, Աստուրիան Բասկանիա



Մենք՝ 16 երկրից ավելի քան 70 երիտասարդ մասնագետներս, հավաքվել ենք Քանդասում (Իսպանիա)՝ քննարկելու Եվրոպայում գյուղաբնակ երիտասարդների առջև ծառայած կարևորագույն մարտահրավերներն ու խնդիրները: Անցած 2 տարիների ընթացքում իրականացված ցանցային տարբեր գործողությունների արդյունքում Գյուղական երիտասարդական Եվրոպական 2-րդ Խորհրդարանը մշակել է այս հռչակագիրը, որն ուղղված է բարելավելու գյուղաբնակ երիտասարդների կյանքը: Մենք կոչ ենք անում Եվրոպական ազգային և տեղական պետական մարմիններին, գյուղական զարգացման կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին հաշվի առնել երիտասարդների կարիքներն ու կարծիքը և գործել համահունչ:



## Բազմազան հնարավորություններ տնտեսական գործունեության համար

Գյուղի և քաղաքի ապրելակերպի և աշխատանքային պայմանների միջև կա զգալի տարբերություն: Գյուղատնտեսությունը և գյուղական զբոսաշրջությունն այլևս բավարար չեն գյուղական տնտեսությունը պահպանելու համար: Ուսումնասիրություններն ու զարգացումը, ինչպես նաև գյուղական տնտեսության դիվերսիֆիկացիան դարձել են ավելի կարևոր: Սոցիալական մերժվածությունը, գենդերային անհավասարությունը և գործազրկությունը շոշափելի խնդիրներ են: Սոցիալական բացառումը նմանատիպ տարածքներում սահմանափակում է ձեռնարկատիրական գործունեությունը: Ապրելակերպը փոփոխության է ենթարկվել և դրա հետ մեկտեղ նաև փոխվել է գյուղերի, աշխատատեղերի, սոցիալական գործունեության և միջանձնային հարաբերությունների ողջ կառուցվածքը:

1. Մենք ցանկանում ենք զարգացնել գյուղաբնակ երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունները և մոտիվացիան՝ կրթության և վերապատրաստման, ուսումնառության և աշխատանքի փոխանակման միջոցով, ինչը կնպաստի սոցիալական ադապտացիային և կապահովի շրջակա միջավայրի պաշտպանությունը:
2. Մենք խնդրում ենք գյուղական ձեռներեցության զարգացման համար ստեղծել համապատասխան պայմաններ՝ բարելավել ֆինանսական աղբյուրների հետ կապը, բարձր ռիսկայնություն ունեցող նախագծերի համար ստեղծել աջակցության համակարգ և խթանել համագործակցությունը մասնավոր, ինչպես նաև պետական դերակատարների միջև:



## Կայուն գյուղացիական տնտեսության և սննդի համակարգ

Ներկայիս սննդային համակարգը ազդում է շրջակա միջավայրի, աշխատողների իրավունքների և փոքր ֆերմերների կենսունակության վրա: Արտադրական գյուղատնտեսությունը և անասնաբուծությունը տարածված պրակտիկա է ամբողջ Եվրոպայում, ինչը ներառում է ջերմոցային գազերի արտանետում, կենսաբազմազանության անկում, հողի էրոզիայի առաջացում և ջրի աղտոտում: Փոքր ֆերմերները կորցնում են իրենց մրցունակությունն ու ուժն այս համակարգում: Նորարարության բացակայությունը խոչընդոտում է գյուղատնտեսական ոլորտի արդիականացմանն ու հարմարվողականացմանը, որոնք իրենց հերթին ուղղված են տնտեսական, կլիմայական և սոցիալական մարտահրավերների լուծմանը:

3. Մենք ԵՄ-ը և այլ համապատասխան ղեկավար մարմիններին կոչ ենք անում խթանել կայուն, օրգանական և անվտանգ սննդային համակարգի ստեղծմանը, ինչպես նաև աջակցել ֆերմերների ցանցային աշխատանքին՝ բարելավելով ֆինանսավորման մեթոդները և սերտիֆիկացման գործընթացը:
4. Մենք պահանջում ենք խթանել նորարարական սննդի մատակարարման ցանցերը՝ աջակցելով տեղական արտադրողների կարողություններին, ուղղահայաց և հորիզոնական համագործակցություններին և բարձրացնել տեղական արտադրանքի հանդեպ հարգանքը:



## Ենթակառուցվածքային և թվային կապ

Երիտասարդների համար գյուղական տարածքների գրավիչ լինելը կապված է հասանելիության հետ: Հասարակական տրանսպորտը և լավ վիճակում գտնվող ճանապարհները կարևոր նշանակություն ունեն գյուղաբնակների փոխադրման համար: Գյուղական բնակավայրերն ավելի վատ են կապակցված, քան քաղաքները, ինչը զգալիորեն ազդում է լայնածավալ ցանցային աշխատանքի իրականացման համար, նշենք նաև, որ գերարագ լայնածավալ համագործակցության իրականացումն Եվրոպայի թիրախային հարցերից մեկն է:

5. Մենք պահանջում ենք պետական և մասնավոր ներդրումների ավելացում, լայնաշերտ ցանցային համագործակցության և գյուղական բնակավայրերը միմյանց կապող ենթակառուցվածքների ստեղծման համար, ինչի արդյունքում կստեղծվի հանրային ծառայությունների հավասար մատչելիություն և ձեռներեցության խթանում:
6. Մենք պահանջում ենք ռազմավարության մշակում, որի շնորհիվ կլուծվի քաղաքային և գյուղական տարածքների միջև անջրպետի խնդիրը և կկանխի այն՝ ստեղծելով համագործակցական կապ թվային գործիքների օգտագործման, դրամահավաքի, կամավորության և ցանցային համագործակցության միջոցով:



## Հասարակական ծառայությունների հասանելիություն և որակ

Գյուղական տարածքներում գոյություն ունի հասարակական ծառայությունների մատչելիության և որակի խնդիր: Առողջապահության, կրթության, սոցիալական աջակցության և պետական կառավարման մարմինները կենտրոնացած են Եվրոպայի քաղաքային վայրերում, ինչն ենթադրում է անհավասար հասանելիություն և շատ հաճախ մարդկանց կարիքները չեն բավարարվում: Այս հաստատությունների անհասանելիությունն ոչ մի Նորարարական լուծման չի ենթարկվում, ինչն էլ հաճախ մարդկանց բնակավայրի լքման պատճառ է դառնում:

7. Մենք պահանջում ենք տեղական կառավարական մարմինների հզորացում ֆինանսական գործիքների միջոցով: Ինչի շնորհիվ տեղական զարգացման համար մշակվելու են Նոր ռազմավարություններ, իսկ հանրային ծառայություններում կգրանցվի աշխատատեղերի որակական փոփոխություն: Այս ամենը կնպաստի տարածաշրջանային և քաղաքային կենսապայմանների հավասարեցման և գյուղական բնակավայրերն առավել գրավիչ կդառնան:

8. Մենք պահանջում ենք աջակցել և հզորացնել տեղական քաղաքային իշխանություններն որոշումների կայացման գործընթացում: Տեղական կառավարման հզորացման հետ մեկտեղ կփոփոխվի նաև պետական ծառայությունների որակը:



## Քաղաքացիական ներգրավվածություն և քաղաքական իրազեկություն

Շատ երիտասարդներ պայքարում են գյուղական վայրերում առկա ներուժի օգտագործման համար, սակայն գյուղաբնակ երիտասարդության ակտիվությունը թույլ է: Տեղական, տարածքային և ազգային իշխանությունների հանդեպ անվստահություն կա: Քաղաքական գործունեության փոխարեն երիտասարդները նախընտրում են զբաղվել հանգստի կազմակերպման կամ մարզական գործունեությամբ: Քաղաքացիական ներգրավվածության պակասը պայմանավորված է քաղաքական իրազեկվածության աջակցության և տեղեկատվության բացակայությամբ:

9. Մենք ցանկանում ենք, որ երիտասարդությունը ներգրավվի քաղաքական և սոցիալական կյանքին՝ թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային մակարդակով:

10. Մենք պահանջում ենք որոշումների կայացման թափանցիկ գործընթացներ բոլոր մակարդակներում, հատկապես հրատապ հարցերում՝ ներառյալ կլիմայի փոփոխությունը, միջազգային հարաբերությունները և համերաշխությունը, որոնք ուղղակիորեն ազդում են երիտասարդ սերունդների վրա:

Եվրոպական Գյուղական հորհրդարանը (European Rural Parliament) երկարաժամկետ արշավ է, որը լսելի է դարձնում գյուղաբնակ մարդկանց ձայնը Եվրոպայում՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության և պետական մարմինների հետ: Սա մի երիտասարդական շարժում է, որը ծառայում է որպես հարթակ երիտասարդների և գյուղական զարգացման գործընթացում ներգրավվելու համար: Սա մի կապող օղակ է Եվրոպայում գործող կազմակերպությունների և բարձրակարգ մասնագետների միջև: Այստեղ ներկայացվում են գյուղաբնակ երիտասարդների խնդիրները բոլոր շահագրգիռ կողմերին:

Իմացեք ավելին՝ [www.europeanruralparliament.com](http://www.europeanruralparliament.com)  
Էլ Դասցե՝ [erpyouth@gmail.com](mailto:erpyouth@gmail.com)



The European Rural Youth Declaration was processed within the project “The best is yet to come. Youth create tomorrows' rural reality from village to wider Europe”, financed with the support of European Commission’s “Erasmus+: Youth in Action” administered in Latvia by the Agency for International Programs for Youth. This publication reflects only the authors views, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.